ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ՓՈՍՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Արթուր Ավետիսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման, կապի և փոստի վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Բելառուսի Հանրապետություն,

ք. Մինսկ, 2020թ. հունվարի 21-23-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտե:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «ԳԼՈՆԱՍՍ» համակարգի ազդանշանները օգտագործող նավիգացիոն տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համատեղ նախագծերի Աշխատանքային խմբի նիստի և ԱՊՀ-ի տիեզերքի գծով միջպետական խորհրդի առաջին նիստի աշխատանքներին:

6. **Քննարկված թեմաները.**

1. 2020թ. հունվարի 21-ին կայացած «ԳԼՈՆԱՍՍ» համակարգի ազդանշանները օգտագործող նավիգացիոն տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համատեղ նախագծերի Աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում քննարկվել են.

- Աշխատանքային խմբում ըստ գործունեության ուղղությունների նշանակված կազմակերպությունների և դրանց անհատական կազմի որոշումը.

- «ԳԼՈՆԱՍՍ» համակարգի ազդանշանները օգտագործող նավիգացիոն տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համատեղ նախագծերի Աշխատանքային խմբի 2020թ. աշխատանքային ծրագիրը.
- Աշխատանքային խմբի անդամների փոխգործակցության կազմակերպմանն ուղղված առաջարկությունները:

2. ԱՊՀ-ի տիեզերքի գծով միջպետական խորհրդի առաջին նիստի ընթացքում քննարկվել են օրակարգով նախատեսված 15 հարց, որին գումարվել են նաև Ղազախստանի ներկայացուցիչների կողմից առաջադրված ևս 3 հարց (օրակարգը կցվում է):

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

21.01.2020թ. մասնակցել եմ «ԳԼՈՆԱՍՍ» համակարգի ազդանշանները օգտագործող նավիգացիոն տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համատեղ նախագծերի Աշխատանքային խմբի աշխատանքներին, որտեղ քննարկվել է Ղազախստանի Հանրապետության երկրորդ միավորված կայանի հարցը: Վերը նշված հարցի շրջանակներում մանրամասն ներկայացրեցի Ռուսաստանի տարածքից դուրս՝ Բյուրականում տեղադրված Առաջին միավորված կայանի աշխատանքային պայմանները:

Հստակեցվել և հաստատվել է տվյալ աշխատանքային խմբի աշխատանքների ժամանակացույցը:

22.01.2020թ. մասնակցել եմ Տիեզերքին նվիրված առաջին միջպետական խորհրդի նիստին, որի ընթացքում խորհրդի նախագահ ընտրվեց Բելառուսի Հանրապետության Գիտությունների ակադեմիայի նախագահ Վլադիմիր Գուսկովը:

Ըստ կանոնակարգի նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցում է նախորդ համաժողովն ընդունող կողմը, իսկ նախորդ համաժողովը տեղի էր ունեցել Երևանում 2018թ. դեկտեմբեր ամսին: Հետևաբար, հակիրճ ներկայացրեցի ընդունված որոշումների կարգավիճակի և ընթացքի մասին տեղեկատվություն:

«Ռոսկոսմոս»-ի կողմից հատուկ նշվեց Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող գործընկերային հարաբերությունների մասին, մասնավորապես Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի հետ համագործակցության մասին:

Երկկողմ հանդիպումներ եմ ունեցել Սավելև Վլադիմիրի գլխավորությամբ ՊԿՀ-ի պատվիրակության հետ և քննարկել հայկական ռազմարդյունաբերական ընկերությունների հետ համագործակցության վերաբերյալ:

«Ռոսկոսմոս» պետական կորպորացիան ներկայացնող Մակարով Յուրիի հետ քննարկել ենք Օրգով գյուղում գտնվող ռադիոօպտիկական տեսադիտակի վերագործման հարցը:

Ղազախստանի Հանրապետության պատվիրակության հետ քննարկվել է իրենց կողմից նոր գործարկվող գեոստացիոնար արհեստական արբանյակից ռեսուրս տրամադրելու առաջարկը, որի մասին պայմանավորվածություն է ձեռք բերվել մանրամասն քննարկել իրենց կողմից ներկայացված առաջարկը:

23.01.2020թ. այցելել եմ «ԱռմՊռոյեկտՍերվիս» ՍՊԸ որտեղ ծանոթացել եմ տվյալ ընկերության գործունեությանը և քննարկվել է համագործակցության ուղիները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

«ԳԼՈՆԱՍՍ» համակարգի ազդանշանները օգտագործող նավիգացիոն տեխնոլոգիաների զարգացման և իրականացման համատեղ նախագծերի Աշխատանքային խմբի նիստի ավարտին կազմվել է նիստի արձանագրությունը (կցվում է), ինչպես նաև ԱՊՀ-ի տիեզերքի գծով միջպետական խորհրդի նիստում կայացվել են օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան որոշումներ:

Որոշում կայացվեց նաև ԱՊՀ-ի տիեզերքի գծով միջպետական խորհրդի երկրորդ նիստը անցկացնել 2020թ. Ղազախստանի Հանրապետությունում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նիստերի ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են արձանագրության մեջ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արթուր Ավետիսյան

29.01.2020թ.